ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՆՄԱՊՁԲ-21/3

ք. Գյումրի 06.03.2021թ

«Դելտա» ՍՊԸ , այսուհետ՝ «Վաճառող», ի դեմս տնօրեն Լ.Կարաբաշյան ի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից և մյուս կողմից «Բեռլին պոլիկլինիկա» ՓԲԸ՝ այսուհետ՝ «Գնորդ», ի դեմս տնօրեն Ս.Հովհաննիսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, կազմեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1.Պայմանագրի առարկան

1.1 Վաճառողը պարտավորվում է Գնորդին մատակարարել լաբորատոր նյութեր, այսուհետ՝ ապրանք, ինչպես նաև Գնորդի կողմից մատակարարված ապրանքները դրանք ներկայացնող անձանց, իսկ Գնորդը պարտավորվում է վճարել դրա դիմաց:

1.2 Մատակարարված ապրանքը փաստագրվում է համապատասխան հաշիվ-ապրանքագրերով:

2.Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Վաճառողը մատակարարում է ապրանք , որը նախապես համաձայնեցվում է Գնորդի հետ:

2.2 Ապրանքի դիմաց փոխհատուցումը Գնորդն իրականացնում է իր հետ համաձայնեցված և Վաճառողի կողմից ներկայացված գնացուցակներում նշված պայմանագրային գներով:

2.3 Ապրանքի գների փոփոխության դեպքում Վաճառողը պարտավորվում է ներկայացնել գրավոր տեղեկատվություն Գնորդին, նրա հետ համաձայնեցնելով նոր գները:

2.4 Վաճառողը պարտավորվում է մատակարարել որոկյալ ապրանք:

2.5 Գնորդն ընդունում է մատակարարված ապրանքը տեղում, համաձայն հաշիվ- ապրանքագրի, քանակային և որակական ստուգման միջոցով, որը հաստատվում է Գնորդի և Վաճառողի ստորագրություններով, ինչպես նաև հաստատվում է ստացողի Ստորագրությամբ /հանձնման պահին պետք է առկա լինի ապրանքի պիտանելիության ժամկետի առնվազն 2/3-ը և ապրանքը պետք է լինի փակ /չօգտագործված/ վիճակում:

2.6 Հաշիվ-ապրանքագիրը Վաճառողը պարտավորվում է կազմել փաստացի մատակարարումից հետո, յոթ օրվա ընթացքում:

3. Վճարման կարգը

3.1 Պայմանագրի ընդհանուր գումարը կազմում է 91 800 /ինսունմեկ հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ: Գնորդը պարտավորվում է ապրանքի մատակարարումը ընդունել և վճարումը կատարել ոչ ուշ, քան հաջորդ ամսվա մինչև ամսի 20-ը:

3.2 Ապրանքի դիմաց 3.1 կետում նշված ժամկետում չվճարելու դեպքում Գնորդը պարտավորվում է վճարել տույժ յուրաքանչյուր ուշացման օրվա համար չվճարված գումարի 0.001 տոկոսի չափով:

4. Այլ պայմաններ

4.1 Կողմերի պայմանագրով չկարգավորված հարաբերությունների վրա տարածվում են բաղաքացիական օրենսդրության և գործող այլ օրենքների, օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի նորմերը: Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով :

4.2 Սույն պայմանագիրը գործում է ստորագրման պահից մինչև 31.12.2021թ. ժամկետով:

4.3 Սույն պայմանագիրը կազմված է 2 (երկու) հայերեն օրինակներից՝ կողմերից յուրաքանչյուրին մեկական հավասարազոր օրինակ: Այն կազմված է 3 էջից, ներառյալ հավելված 1-ը, որը հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը:

Կողմերի իրավաբանական հասցեները և վավերապայմանները՝

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
<<Բեռլին պոլիկլինիկա>> ՓԲԸ	<<Դելտա>>ՍՊԸ
Ք. Գյումրի Հաղթանակի 25	ք. Երևան, Կոմիտասի պող. 49/4
Հ/Հ 247260002750	<<Կոնվերս բանկ >>ՓԲԸ
Արդշինբանկի Գյումրի մ/ճ	Հ/Հ 193004670058
ՀՎՀՀ 05503375	ՀՎՀՀ 00004912
Տնօրեն՝ Ս.Հովհաննիսյան	Տնօրեն Լ.Կարաբաշյան
---------- (ստորագրություն)	---------- /ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված 1

Լաբորատոր նյութեր				
հ/հ	Ապրանքի անվանում	Միավոր գին	Քանակ	Ընդհանուր գումար /հազար դրամ/
1	Գլյուկոզ G-col /գլյուկոզի որոշման թեսթ-հավաքածու /400մլ/	6600	2	13,2
2	Խոլոստերոլ CHOLESTEROL /Ընդհանուր խոլեստիրինի թեսթ -հավաքածու/ /200մլ/	6000	6	36
3	HDL խոլեստիրին /50մլ/	9600	2	19,2
4	Միզանյութ Urea-Col/Միզանյութի որոշման թեսթ-հաավաքածու /200մլ/	7800	3	23,4

Գ Ն Ո Ր Դ

<<Բեռլին պոլիկլինիկա>> ՓԲԸ
Ք. Գյումրի Հաղթանակի 25
Հ/Հ 247260002750
Արդշինբանկի Գյումրի մ/ճ
ՀՎՀՀ 05503375
Տնօրեն՝ Ս.Հովհաննիսյան

---------- (ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

<<Դելտա>>ՍՊԸ
ք. Երևան, Կոմիտասի պող. 49/4
<<Կոնվերս բանկ >>ՓԲԸ
Հ/Հ 193004670058
ՀՎՀՀ 00004912
Տնօրեն՝ Լ.Կարապետյան

---------- /ստորագրություն/
Կ.Տ